

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Մայր Աթոռի դիվանապետ և հոգևոր ճեմարանի վերատեսուչ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1993—94 թթ. ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Նախագահական սեղանի շուրջ հոգևոր ճեմարանի վերատեսուչ սրբազան հոր կողքին տեղ էին գրավել Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը և հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Անանիա եպիսկոպոս Արաքելյանը:

Հոգևոր ճեմարանի նոր ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայրավանքի պաշտոնեությունը, մեծ թվով հյուրեր և ուսանողների ծնողներ:

Հանդիսությունը սկսվում է Տերունական աղոթքով: Այնուհետև հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ հնչում է Հայաստանի Հանրապետության հիմնը և Ճեմարանի քայլերգը: Որից հետո երաժշտության դասախոս Խորեն Պալյանի ղեկավարությամբ սաները կատարում են Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի «Լոյս փառաց» և Ներսես Շնորհալի Հայրապետի «Հայրատունկ Այգունյն» հոգեպարար շարականները: Ապա հոգևոր ճեմարանի դասատիարակ Տիրայր քահանա Գըլըճյանը Ս. Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը», (Մտթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ուսումնական տարեշրջանի բացման խոսքով հանդես է գալիս ճեմարանի տեսուչ Տ. Անանիա եպիսկոպոս Արաքելյանը: Սրբազան հայրը ուրախությամբ նշում է, որ վերաբացվող տարվա հետ նոր հույսեր ու ապասելիքներ ենք ունենում, որ գալիք սերունդը ևս եկեղեցանվեր ոգով ու մտավոր կարողությամբ պիտի կարողանա բավարարել մեր ժողովրդի հոգևոր պահանջները ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Որից հետո Անանիա սրբա-

զանը ներկայացնում է տեսչությանը և դասախոսական կազմին, որ հոգևոր ճեմարանը համալրվել է նոր դասախոսներով՝ հրավիրված այլ ուսումնական հաստատություններից:

Շարունակելով խոսքը, ճեմարանի տեսուչն իր երախտագիտությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ դեպի ճեմարանն ունեցած նրա հայրական ջերմ հոգատարության համար:

Սրբազան հոր խոսքից հետո «Դ» լսարանի սան Գեղամ Մսուրտիրոսյանն արտասանում է մի հատված Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութիւն»-ից: Այնուհետև երգչախմբի կատարմամբ հնչում է «Յաղթող» և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականները:

Վերջում Անանիա սրբազանը հրավիրում է հոգևոր ճեմարանի վերատեսուչ Ներսես արքեպիսկոպոսին իր օրհնությունները բաշխելու ուսանողներին և ներկաներին:

Սրբազան հայրը իր հայրական ողջույններն ու բարի մաղթանքներն է բերում հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

Վերատեսուչ սրբազանը սրտի բերկրանքով է խոսում այն իրողության մասին, որ համայն հայության ազգային և հոգևոր վերազարթոնքի այս պայմաններում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության համար մի աննկարագրելի լայն ասպարեզ է բացվել: Մեր ժողովրդի զավակները, վերադառնալով իրենց հայրերի արմատներին, մեծ խանդավառությամբ ու ոգևորությամբ են վերաբերվում մեր ազգային հոգևոր ու մշակույթի արժեքներին: Իր խոսքն ուղղելով սաներին, մասնավորապես նշում է, որ ճեմարանի ուսանողները իրենց մտավոր և իմացական մակարդակով զարգացած և պատրաստ լինեն իրենց ուսերին կրելու մեր ժողովրդի ճակատագիրը, սերտեն մեր մատենագրության բազմադարյան ժառանգությունը, միշտ ամուր, անշարժ պահեն Մեր Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Մայր Հայրենիքը:

Հոգևոր ճեմարանի սույն հանդիսությունն ավարտվում է «Հայր մեր»-ի խմբովին երգեցողությամբ և Ներսես արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով: